

1. Դիմորդը ոչ մի հարցով ԵՊՀ ընդունող հանձնաժողով չի այցելում, ընդունելության քննության և մասնագիտությունների հայտագրման դիմում-հայտը [dimord.am](http://dimord.am) կայքի միջոցով ԳԹԿ է ուղարկում էլեկտրոնային (առցանց) եղանակով՝ **ս/թ մայիսի 25-ից մինչև հունիսի 15-ը ներառյալ, հունիսի 15-ին՝ մինչև ժամը 18:00:** ԵՊՀ դիմորդները մասնագիտությունների լրացման հետ կապված խորհրդատվություն ստանալու են հեռախոսագրույցի միջոցով: Խորհրդատվության համար նախատեսված հեռախոսահամարների, ընդունելության կարգի և մասնագիտությունների ցանկի մասին, ինչպես նաև ԵՊՀ մասին այլ տեղեկատվություն ստանալու համար դիմորդը կարող է օգտվել [ysu.am](http://ysu.am) ԵՊՀ պաշտոնական կայքէջի **դիմորդ** բաժնից: ԵՊՀ դիմորդների համար նախատեսված է նաև առանձին էլեկտրոնային փոստի հասցե՝ [dimord@ysu.am](mailto:dimord@ysu.am), որի միջոցով դիմորդը կարող է իր հարցերն ուղղել գրավոր եղանակով:

Ընդունող հանձնաժողովն աշխատում է **մայիսի 25-ից մինչև հունիսի 15-ը**, առանց հանգստյան և տոն օրերի՝ ժամը **9:00-19:00-ն**, իսկ **հունիսի 15-ին՝ ժամը 9:00-18:00-ն:**

---

2. Հիմնական փուլի մրցույթի արդյունքները հրապարակվելու են **ս/թ հուլիսի 18-ին:** Հրապարակելուց հետո ընդունելության քննությունից դրական միավոր ստացած, սակայն մրցույթից դուրս մնացած դիմորդները թափուր տեղերի առկայության դեպքում կարող են մասնակցել թափուր տեղերի (**լրացուցիչ փուլի**) մրցույթին: Թափուր տեղերի մրցույթին մասնակցելու համար մասնագիտությունների նշումով նոր դիմում-հայտը դիմորդները [dimord.am](http://dimord.am) կայքի միջոցով ԳԹԿ են ուղարկում էլեկտրոնային (առցանց) եղանակով՝ **ս/թ հուլիսի 20-ից մինչև հուլիսի 22-ը ներառյալ, հուլիսի 22-ին՝ մինչև ժամը 18:00-ն:** Հիմնական փուլով ընդունված դիմորդները չեն կարող մասնակցել լրացուցիչ փուլի մրցույթին: Լրացուցիչ փուլի մրցույթի արդյունքները կհրապարակվեն **ս/թ հուլիսի 25-ին:**

ԵՊՀ ընդունված դիմորդները ընդունելության կարգի 35-րդ կետի համաձայն պետք է սեպտեմբերի 1-ին համապատասխան ֆակուլտետի դեկանատ ներկայացնեն պահանջվող փաստաթղթերի բնօրինակները:

### Պահանջվող փաստաթղթեր

1. **Ավարտական փաստաթուղթ՝** ատեստատ կամ դիպլոմ (միջուկով)
2. **Լուսանկար** (3x4 սմ չափսի) – 1 հատ
3. **Անձը հաստատող փաստաթուղթ** (բնօրինակը և պատճենը 1 օրինակից)
4. **Արտոնություններից օգտվելու դեպքում համապատասխան փաստաթղթեր**

Արտոնություններից օգտվելու դեպքում ներկայացվող **լրացուցիչ փաստաթղթեր** **Մայիսի 25-ից մինչև հունիսի 15-ը** հայտը լրացնելիս, 66-69 կետերից օգտվող դիմորդները նեքոնշյալ փաստաթղթերի միայն բնօրինակները պետք է ուղարկեն [dimord@ysu.am](mailto:dimord@ysu.am) էլեկտրոնային փոստին՝ նշելով անունը, ազգանունը, հայրանունը, և մասնագիտությունը: Հակառակ դեպքում արտոնությունից չեն կարող օգտվել:

ԿԵՏ 66

**Տեղեկանք զինծառայող ծնողի զոհվելու մասին**  
(բնօրինակը և պատճենը 1 օրինակ)

**Ծնողի մահվան վկայականը**

(բնօրինակը և պատճենը 1 օրինակ)

**Դիմորդի ծննդյան վկայականը**

(բնօրինակը և պատճենը 1 օրինակ)

**ԿԵՏ 67 - 1)**

**Անձնագիրը և ծննդյան վկայականը**

(բնօրինակը և պատճենը 1 օրինակ)

**Տեղեկանք 1-ին կամ 2-**

**րդ խմբի հաշմանդամ, կամ մինչև 18 տարեկան մանկուց հաշմանդամ լինելու մասին**

(բնօրինակը և պատճենը 1 օրինակ)

**ԿԵՏ 67 - 2)**

**Անձնագիրը և ծննդյան վկայականը** (բնօրինակը և պատճենը 1 օրինակ)

**Առանց ծնողական խնամքի մնալու մասին հաստատող փաստաթղթերը** (բնօրինակը և պատճենը 1 օրինակ)

**ԿԵՏ 68**

**Զինվորական գրքույկ**(բնօրինակը և պատճենը 1 օրինակից)՝ առկայության դեպքում

**ԿԵՏ 69**

**ԺԱՈՒՏԻԿՈՎՅԱՆ, ՄԵՆԴԵԼԵԵՎՅԱՆ ԵՎ ՄԵԳԱՊՈԼԻՄԵՐԻ միջազգային օլիմպիադայի հաղթողի դիպլոմ** (բնօրինակը և պատճենը 1 օրինակից)

---